

— Յանուարն զի՞ծ. Կոնսիստ. Վրաստ. և իմէրէթի զկարգմանէ Գեր. Անանիա եպս. ի ի Գանձակ. թ. 460:

— Յանուարն Գեր. Տ. թեմակալին Վրաստանի և իմէրէթի Գեորգ Արքեպս.-ի, յաղաղքս հրաւիրելոյ ի ժողով զբաժնետեսարս կալուածոյն Մարցայ և առաջարկելոյ նոր բաժանումն. թ. 463:

— Յանուարն յիշեալ Արքեպս.-ի, որով յայտնեցաւ նմա կարգումն Գեր. Անանիա եպիսկոպոսի ի Գանձակ և փոխադրութիւն փոխանորդին Գանձակայ Տ. Բազրատ վարդապետի ի Տփլիս. թ. 466:

Հայրապետական պարգեւք.

Շնորհեցան Կոնդակք Հայրապետականք յաղաքս կրելոյ զյանձնախաչ քահանայականս Բարեկ. քահանայիցն՝ Յովհաննու Տաթեմ գեղջ, խորենայ Գորիս աւանի, Ներսէս, Ղևոնդ և Սեդրակ քահանայից Աստրախան քաղաքի. Գեորգ քահ.-ի Շուլավէր գեղջ. թ. թ. 368, 369, 371, 372, 373 և 383:

Շնորհեցան Կոնդակք յաղաքս կրելոյ զզխարկն կամիլաւայ՝ Արժ. Սարգիս քահ.-ի Թաթսիգեան Զիշնէ քաղաքի և Գրիգոր քահանայի Տ. Գրիգորեան Ս. Պետերբուրգ մայրաքաղաքի. թ. 375, 376:

Շնորհեցաւ Կոնդակ ընդ պատուոյ Աւագ քահանայութեան անդամոյ Կոնսիստ. Նրեանայ Արժ. Գրիգոր քահ. Սուքիասեան. թ. 367:

Շնորհեցան Կոնդակք յաղաքս կրելոյ զյանձնախաչ վարդապետական այցելու հովուին Պուլկարիոյ Բարձր. Տ. Բարդուղիմէոս Տ. վարդապետի Պաղձեան և վանահօր Թէլէթ ախտաանդուոյն Տ. Դիոնէսիոս վարդապետի. թ. 381 և 398:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուան հոգաբարձութեան Ս. Փրկչեան Աղգ. Հիւանդանոցի Կ. Պօլսոյ թ. 348:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուան պ. Միքայիլի Միքայէլեանց ի Մոսկուայ, յաղաքս նուիրելոյ նորա զարձան մի վեհ. Հայրապետին, յաւուր 80 ամեայ տարեգարձի ծննդեան նորին. թ. 409:

— Յաւակցական և միսթարական յանուան իշխանուհի Մարիամու Նրկայնարազուկ — Արդութեան, յաղաքս մահուան մ'ըն և երկուց եղբարց նորա. թ. 420:

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԳԻՒ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Յունուար. 14. Նորին Սրբութեան բարեհաճ տնօրէնութեամբ վանական կառավարութեան անդամ՝ նշանակուեցաւ Տ. Նիկիշէ վարդապետ Ահարօնեան:

Փետր. 7. Ս. Սինօզն հրամայեց Շամախու կոնսիստորիային երկու ամիս ժամանակով Սահակ քահանայ Մակարեանցին ապաշխարելու ուղարկել Սաղեանի ս. Ստեփաննոս վանքը՝ իւր կատարած օրինազանցութեանց պատճառով, և այդ մասին տեղեկութիւն տալ Սինօզին:

Փետր. 9. Սինօզը հրամայեց Նրեանի կոնսիստորիային հրամանագրել ստորագրեալ հոգեւոր կառավարութիւններին և գործակալներին, որ այսուհետեւ բոլոր եկեղեցիներում ուր կան աւելի քան երկու միարան քահանաներ՝ պատարագ անեն «յայտնի և վատակաւոր սրբոց» տօներին:



ԿՐՕՆԱԿԱՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ:

«Յորժամ կիցեց նա՝ Հոգին ձմառնորեան, առաջնորդեց և՛ զամենայն ձրմառնորեանս»:

Յովհ. ԺԶ. 13:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐՆ այս խօսքերը լսելիս չէին մտածում ամենին, թէ ինչպիսի մեծ բան ինչ անասման բարեք է լսոս-

տացուում իրենց, այդ խնացան նորա այն ժամանակ միայն, երբ վերնատան հետ ուր ժողովուած էին Փրկչի յարութիւնից յիսուն օր յետոյ՝ նոցա ամբողջ կազմածը ցնցուեցաւ և ներսը մի վայրկեանական յեղափոխութիւն տեղի ունեցաւ, որ շրջումս նոր մարդ էր դարձնում նոցա՝ մի բոլորովին նոր արարած։ Եւ երբ աչք բաց արին այս ստեղծագործութիւնից յետոյ՝ պակաս հիացմունքով չէին նայում անշուշա իրենց շուրջը, պակաս զարմանալի չէր և նորահրաշ նոցա համար այն ամենը ինչ որ տեսնում էին, քան առաջին մարդու համար մեր այս գեղեցիկ աշխարհը իւր դրախտային վիճակի մէջ պէտք է լինէր։ Սոյն աստուածաբուն արարչական գործութիւնը, որ «կենդանի շունչ» պարգեւեց այնտեղ հողային զանգուածին՝ շնչաւոր մարդուն «կենդանարար հողի» էր սլարդեում այստեղ, և այնչափ բուռն էր այդ հողու ազդեցութիւնը, այնչափ զեղուն սրտի մէջ շարժած բերկրապատար զգացումներն հոսանքը, այնչափ առասմոքի մէջ ճառագայթած վերին խնացականութեան լոյսը, որ մարդկային լեզուն անկարող մի անգամից պատշաճ արտայայտութիւններ գտնել նորա թելադրութիւնների համար՝ մերթ կարկտնում մնում էր, մերթ իբրեւ հրեղէն սլաք թռչում բերանից՝ խորհրդաւոր, հոգեկորով ականջին միայն հասկանալի ձայներ տալիս, իսկ շուրջը կոյր ամբողջ դիտում էր սալշած ու հեգնում ոլորման սրամտութեամբ — քաղցուտից են։

Սակայն ի՞նչ է պատասխանում առաքելաւոր երբ շնորհատու ա. հոգին քսկում է նորա լեզուի կապանքը և խօսքեր դնում նորա բերանում, որ բոլորովին օտարտի են ունկնդիրների համար և անսպասելի մի հասարակ ձկնորսի կողմից՝ որ մի օտար աշխարհից են հնչում կարծես օտար բարբառով։ Պետք է խօսումս բայց նա այլ ևս այն թույլատրու մարդը չէ, որ մի աղախնի առաջ չհամարձակուեցաւ ճշմարտութիւնը խոստովանել և ուրացաւ, նորա վերայ կատարուել է իւր Տիրոջ և Վարդապետի գուշակութիւնը, թէ կգայ մի օր, երբ ժողովրդի բազմութեան մարդոց առեանի յառաջ կեննէք և կարիք չէք ունենայ ամենեւին մտածելու, թէ ինչ խօսէք, որովհետեւ

աւել ա. հոգին կխօսէ ձեր փոխարէն, ահա եկել է օրը, և նա կանգնած է հրապարակում արձակ համարձակ՝ խօսքերը հեղեղի նման թափուում են նորա բերանից, և նա չի տատանուում ամենեւին ճշմարտութիւններ յայտնելու, որոնք շատ թանկ կարող էին նստել իրեն. ճշմարտութեան հոգին խօսում է նորա մէջ։ Գուք հրեաներ, դուք երբեւադէմայիք, ասում է նա, փայտի վերայ բեռնել և սպանել առիք Յիսուս Ծաղովրեցուն, որի ընտրեալ լինելն այնչափ նշաններով և հրաշքներով յայտնել էր Աստուած, և կաքծում էիք, թէ Սորա հետ Սորա գործն ևս թաղեցիք, վերջացաւ, չէիք մտածում, թէ մահը անմահին բռնել, կապած պահել չի կարող, բայց Աստուած ապացուցեց այդ, յարութիւն տալով Սորան՝ ապացուցեց, որ դուք ունայն տեղը կամեցաք մի անարգ ստրուկի պէս խաչի մահուան դատապարտելով՝ Սորա Ճշմարտ Մեսիա լինելը հերքել, որ Սա նոյն ինքն խօստացեալ Մեսիան էր, Իւր յարութեամբ կրկնակի տիրական փառքի արժանացած։ Եւ ահա իբրեւ Տէր և Օծեալ Սա ուղարկել է մեզ, Իւր աշակերտներին և Իւր յարութեան վկաններին՝ այն աստուածային հոգին, որով Ռքն օծուեցաւ։ Թովել մարդարէն գուշակել էր արդէն, թէ Մեսիայի գալստեան յաջորդող երանաւէտ ժամանակներում այլ ևս հատ հատ մարդարէներ չեն լինի, որ ա. հոգեով լեցուած Աստուծոյ կամքը յայտնեն աշխարհին, այլ բոլոր երկրադածներն առանց հասակի և սեռի խաբութեան, կրեցուն ա. հոգեով ու կմարդարէանան։ Այդ ժամանակն եկել է, Աստուծոյ հոգին, յարուցեալ Մեսիայի հոգին՝ գործում է այն, ինչ որ ձեր աչքով տեսնում էք և ձեր ականջով լսում, և ձեզ չի յաջողուի ճշմարտութեան այդ հոգին սպանել, ինչպէս սպանեցիք մարմնով ճշմարտութեան Վարդապետին։

Այո, զարեւրի պատմութիւնը հաստատեց, որ չի յաջողուի սպանել, ճշմարտութեան հոգին, որ Սիրոյ հոգի է՝ աշխարհի բոլոր լեզուները խօսել սովորեցրեց այս մի բուռն ազէտ մարդոց և ազգով ու երկրով բոլորովին օտար ազգերի համար հասկանալի դարձրեց երկնային ճշմարտութեան աւետարանը։ Այո

սօր անկիւն չկայ որ նոյն Հոգւով մկրտուած մարդիկ աւետարան չքարոզեն— և սակայն ... որչափ կենդանութեամբ է գործում արգեօք Հոգին մկրտուածներէ մէջ: Արտաքին ոչ մի ոյժ Սորա վերայ բռնանալ, Սորան մեռցնել հարկաւ չէ կարող. բայց եթէ իրենք՝ Հոգին կրողները, Սորա զօրութեան ենթարկուել, Սորա գործունէութեան ազատ ասպարէզ տալ չկամենան ... Ծննդաբանութեան Հոգին հոգւով և ճշմարտութեամբ միայն ընդունել՝ Սորա առատ շնորհներն մաքուր սրտի մէջ միայն տարածուել և արդիւնաւորել կարելի է. իսկ եթէ մարմինը մեր մէջ այնքան իշխանութիւն ունի, որ Հոգու շարժումներէ համար տեղ չի մնում. եթէ մենք այնքան վարժուել ենք կեղծիքն իբրեւ իրականութիւն, առան իբրեւ մարդոց փոխադարձ յարաբերութեան կանոն ընդունելու, որ ճշմարտութիւն տեսնելու աչք չունենք. եթէ մեր սիրան այնչափ ապականուած է և կոշտացած, որ մատչելի չէ այլ ևս վսեմական Հոգւոյ ներշնչումներին՝ աղ- նիւ և սուրբ զգացումներին ... Այն ժամանակ այն Հոգին մեր մէջ հաստատուել և մեզ նո- րոգել չի կարող. բայց մենք մարդկութիւն չենք. Սա կգան, միշտ զէպի վերինն ու ա- տուածայինն ուղղուած, երկնքի պայծառ ու մաքուր եթերը շնչել փափագող, բա- րոյական ու զազափարական ձգտման համար պատրաստ հոգիներ, որոնց մէջ թափէ Ուր շնորհները. և այդ Կենդանարար Հոգու աղ- ղեցութիւնը երբեք չի պակասի մեր այս մա- հուան ու ապականութեան ենթակայ աշխար- հից՝ մինչև կգայ Սա, որ նոյն Հոգին աշ- խարհ ուղարկեց և հոգեւոր վերանորոգութեան սկիզբ դրաւ՝ կգայ և ի կատարումն կհասցնէ, հոգեւորն ի կեանս հրաւիրելով և մարմնաւորը մահուան դատապարտելով: Վայ մեզ է, եթէ յամուենք մեր մարմնական ցանկութեանց մէջ և ասպարէզ չաւանք ս. Հոգւոյ շնորհներին, որ աւագանի մկրտութեամբ իբրեւ ճշմարիտ կեանքի առհաստատ ընդունեցինք. Այդ- չափ անմիւս է, ք, բացականչում է Առաքեալը. սկսեալ Հոգւով՝ և արդ մարմնով վախճանիք: Զարմացման և զայրոյթի այդ աղաղակը պէտք է լսելի լինի ամբողջ քրիստոնէայ աշխար- հում, երբ ս. Հոգւոյ զալստեան աօնն է կա-

տարուում՝ այնտեղ՝ պէտք է սթափեցնէ թրմ- բաժ մտքերն ու ցածուցանէ մոյի կրքերը:— Ծննդաբանութեան Հոգին սաւառնում է այդ պահուն ինչպէս մեզմ՝ զեփուռը, մեր շուրջ և մեռաք է որոնում. բանալի Սորա առաջ մեր սիրան ու հոգին:

Կ. Վ.



ԿՈՉՄԵՆ ԿԱՐԵԹՐՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԸՆ ՏԵՍԵԿԵՏԻԹ.

ԱՐԵՏԱՐԱՆԻ մէջ շատ կան ինչպէս յայտնի է, զարձուածներ, որոնք տրամադրում են կարծելու, թէ մեր Փրկիչը աշխարհային ամէն դրադմունք աւելորդ բեռ է համարել և խոչընդոտ երկնքի արքայու- թեան: Այդ կարծիքը մեծապէս նպաստել է կրօնաւորական կեանքի զարգանալուն քրիս- տոնէական եկեղեցւոյ մէջ. աշխարհը մեզ կաշկանդում է և սարկացնում իւր հրա- պոյրներով. աշխարհը մեզ ծանրաբեռնում է իւր հոգսերով և ժամանակ չի տալիս երկ- նաւորի մասին մտածելու. պէտք է ուրեմն կտրուել նորա շղթաները և թօթափել նորա լուծը մեր վերայից, որպէս զի բոլոր հոգւով Աստուծուն նուիրուել, Աստուծոյ հետ ան- միջական յարաբերութեան մէջ լինել և Սորա կամքը սրբութեամբ կատարել կարողանանք: Գիտենք սակայն, որ աշխարհի վերայ ապրողը աշխարհից փախել չի կարող. որչափ հեռու փախչենք, այնչափ արագ կգայ նա մեր ետե- լից և վերջ ի վերջոյ ստիպուած պէտք է լինինք կանգնել ու հաշիւ տեսնել նորա հետ. Փրկիչը մեզ ոչ թէ փախել, այլ նորան յաղ- թել է սովորեցրել և Յկեղեցին զնահատելով ու փառարանելով հանդերձ այն մարդոց ան- ձնապահութիւնը, որոնք ճշմարիտ աստուածա- յին սիրով վառուած կամ մի բարձր նպա- տակով ոգևորուած տուն ու տեղ թողել, աշխարհային բոլոր կապերը խզել և անա- պատներ իւր քարանձաւներէ մէջ ձգնելով՝